

**Բարձրագույն մասնագիտական կրթության
Կրթական չափորոշիչ**

Մասնագիտությունը _____

դասիչը, անվանումը

Որակավորման աստիճանը _____ մագիստրոս

անվանումը

Քննարկվել և ընդունվել է
ՎՊՄԻ գիտխորհրդի նիստում
արձանագրություն թիվ _____
“ _____ ” _____ 2008թ.

Վանաձոր
2008թ.

1. _____
դասիչ, մասնագիտության անվանում

Մասնագիտության ընդհանուր բնութագիրը

1.1 _____ մասնագիտությունը
դասիչ, մասնագիտության անվանում
հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության _____թ.
_____ - ի _____ - ի _____ թ. _____ որոշմամբ

1.2 Շրջանավարտի որակավորման աստիճանը _____
մագիստրոս:

_____ մագիստրոսի պատրաստման
անվանում

հիմնական կրթական ծրագրի յուրացման նորմատիվային ժամկետը առկա
ուսուցման ձևով 6 տարի է, որից 4 տարին՝ համապատասխան մասնագիտության
բակալավրի, իսկ 2 տարին՝ մագիստրոսի մասնագիտացման պատրաստման
ծրագրով:

1.3 Շրջանավարտի որակավորման բնութագիրը _____ մագիստրոսը
“Մասնագետների, ղեկավարների և այլ ծառայողների որակավորման տեղեկատու”-ի
պահանջներին համապատասխան՝ բուհն անմիջապես ավարտելուց հետո կարող է
գրադեցնել հետևյալ պաշտոնները.

ուսուցիչ

կրթական հիմնարկության ղեկավար

..... (տրվում է պաշտոնների ցանկը)

1.3 Մասնագիտական գործունեության բնագավառը

մասնագիտությամբ

դասիչ, մասնագիտության անվանում

մագիստրոսի կրթությունն ստացած շրջանավարտն իր որակավորման մակարդակով պետք է նախապատրաստված լինի տարբեր տեսակի կրթական և գիտահետազոտական հիմնարկություններում աշխատելու համար:

1.3.2 Մասնագիտական գործունեության տեսակները:

Մագիստրոսը պետք է պատրաստված լինի խորացված հիմնարար և մասնագիտական գիտելիքներ պահանջող գործունեության հետևյալ ոլորտներում.

- գիտահետազոտական,
- կազմակերպչական-դաստիարակչական,
- ուսուցչական,
- գիտամանկավարժական,
- մշակութային-լուսավորչական և այլն:

Տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի գործունեության տեսակները սահմանված են _____ մագիստրոսի մասնագիտացված պատրաստման ծրագրի բովանդակությամբ:

1.3.3 Մասնագիտական գործունեության ընդհանրական խնդիրները

_____ մագիստրոսը պետք է պատրաստ լինի հետևյալ մասնագիտական խնդիրների լուծմանը.

ա) մասնագիտական գործունեության ոլորտում.

- կիրառելու _____ նշվում է կոնկրետ բնագավառը

բնագավառի հետազոտությունների

խնդիրներին համապատասխանող գիտափորձնական տվյալների հավաքման և մշակման ժամանակակից տեխնոլոգիաներ,

- նախագծելու և իրագործելու ՀՀ հանրակրթական հաստատությունների հիմնական ուսումնական պլանի շրջանակներում մասնագիտական առարկայի ուսուցման բովանդակությանը համապատասխանող սովորողների ուսուցումը և դաստիարակությունը՝ հաշվի առնելով առարկայական գիտելիքների առանձնահատկությունները,
- աջակցելու անձի ընդհանուր կուլտուրայի ձևավորմանը, մասնագիտական կրթական ծրագրերի գիտակցված ընտրությանը և հետագա յուրացմանը,
- ապահովելու սովորողների պետական չափորոշիչներին համապատասխանող կրթական մակարդակը՝ օգտագործելով ուսուցման տարբեր ձևեր, մեթոդներ և միջոցներ:

բ) Կազմակերպչական – կառավարչական գործունեության ոլորտում՝

- ծրագրավորելու և կազմակերպելու մասնագիտական գործունեության բնագավառի մշակման և հետազոտման գործընթացների, ինչպես նաև անհրաժեշտ որակով և նշված ժամկետներում, դրանք իրականացնող, կոլեկտիվների աշխատանքը,
- գնահատելու, կառավարելու և վերահսկելու նշված գործընթացների որակը ինչպես նաև իրականացնելու անձնակազմի ուսուցումը և վերաորակավորումը,
- ծրագրավորելու և կազմակերպելու ստացված արդյունքների ներդրման գործընթացը:

գ) Գիտահետազոտական գործունեության ոլորտում՝ _____ բնագավառի գիտահետազոտական որոշակի հիմնախնդիրների վիճակի վերլուծություն, առաջադրանքի ձևակերպում, հետազոտության նպատակի և խնդիրների առաջադրում՝ գրական և պատենտային աղբյուրների ուսումնասիրման և ընտրության հիմքով

- վերլուծելու, համակարգելու և ընդհանրացնելու հետազոտության թեմայով գիտատեխնիկական տեղեկատվությունը՝ արդի տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ,
- ընտրելու և կիրառելու հետազոտությունների, գիտափորձերի օպտիմալ մեթոդների և ծրագրերի, առկա մեթոդների կատարելագործումը և նորերի մշակումը՝ ելնելով հետազոտության որոշակի խնդրի լուծման անհրաժեշտությունից,
- մշակելու և ներդնելու մասնագիտական գործունեության և այլ ոլորտներում (հետազոտական, կառավարման, արտադրական, սոցիալ-տնտեսական, հումանիտար և այլն) հետազոտվող գործընթացների և երևույթների գնահատման համար մաթեմատիկական մոդելներ և մեթոդներ, համակարգչային տեխնոլոգիաներ,
- գնահատելու իրականացված հետազոտությունների գիտագործնական նշանակության վերլուծությունը և մշակումների տեխնիկա-տնտեսական արդյունավետությունը,
- նախապատրաստելու հետազոտության արդյունքների հրատարակումը գիտական մամուլում, ինչպես նաև ձևակերպելու ելույթներ, ռեֆերատներ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ:

դ) Գիտամանկավարժական գործունեության ոլորտում՝

- դասավանդելու մասնագիտական դասընթացներ բուհերում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում,
- մասնակցելու առարկայական դասընթացների ուսումնամեթոդական մշակումներին:

1.3.5 Որակավորման պահանջները _____ մագիստրոսը մասնագիտական խնդիրների լուծման նպատակով

- ձևակերպում և լուծում է մասնագիտական, կազմակերպչական-կառավարչական, գիտահետազոտական և գիտամանկավարժական գործունեության ընթացքում՝ ծագած խնդիրները, որոնք խորը մասնագիտական գիտելիքներ են պահանջում,
- մասնակցում է իր մասնագիտական գործունեությանն առընչվող գործընթացների և ընթացակարգերի բոլոր փուլերին,
- օգտագործում է մասնագիտական գործունեության օբյեկտների մշակման և հետազոտման իրականացման արդի մեթոդները, միջոցները և տեխնոլոգիաները,
- իր մասնագիտական գործունեության հետազոտական թեմաներով իրականացնում է գիտատեխնիկական տեղեկատվության հավաքում, մշակում, համակարգում և վերլուծություն՝ օգտագործելով արդի տեղեկատվական տեխնոլոգիաները,
- իր մասնագիտական գործունեության ոլորտում հետևողականորեն ուսումնասիրում է մասնագիտական գրականությունը, գիտատեխնիկական

տեղեկատվությունը, ծանոթ է հանրապետական և միջազգային գիտության ու տեխնիկայի նվաճումներին,

- մասնագիտական գործունեության օբյեկտների մշակման և հետազոտությունների իրականացման ընթացքում համագործակցում է իր և հարակից մասնագիտությունների հետազոտողների և մասնագետների հետ, ծանոթ է մշակումներ և հետազոտություններ կատարողների աշխատանքի կազմակերպման և կառավարման տեխնոլոգիաներին,
- ընդունակ է գիտատեխնիկական զարգացման արդի փուլում և հարափոխ սոցիալական իրավիճակներում իր հնարավորությունների վերլուծությանը և վերագնահատմանը, հոգեպես և մեթոդական տեսակետից պատրաստ է իր մասնագիտական գործունեության ձևի և բնույթի փոփոխմանը, միջոցառնթացային նախագծերի վրա աշխատանքին,
- պատրաստ է կազմելու իրականացրած հետազոտության նկարագրությունը, մշակելու և վերլուծելու ստացված արդյունքները, դրանք ներկայացնելու գիտական ակնարկների, ռեֆերատների էլոյթների, հաշվետվությունների և գիտական հոդվածների տեսքով,
- պատրաստ է մասնակցելու մշակված գիտատեխնիկական նախագծերի և հետազոտությունների ներդրման աշխատանքներին:

_____ մագիստրոսը պետք է իմանա՝

- ՀՀ սահմանադրությունը, ՀՀ օրենքները,
- կրթության հարցերով ՀՀ կառավարության և կրթության ոլորտի կառավարող մարմինների որոշումները, երեխաների իրավունքների մասին Կոնվենցիան,
- աշխատանքային օրենսդրության հիմունքները, աշխատանքային հիմունքները, աշխատանքի պաշտպանության նորմերը ու կանոնները,
- բուհերում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում գիտական և մանկավարժական գործունեության կազմակերպման մեթոդները:

_____ մագիստրոսը պետք է ծանոթ լինի.

անվանումը

- իր բնագավառի զարգացման հիմնական ուղղությունների հեռանկարներին,
- իր բնագավառի մասնագիտական գրականությանը և գիտատեխնիկական տեղեկատվության աղբյուրներին,
- իր բնագավառի տեղեկատվական տեխնոլոգիաները, ծրագրային միջոցները, փաթեթները և դրանց զարգացման միտումները,
- մասնագիտական ոլորտի հետազոտական աշխատանքների մեթոդները,
- պատենտային գործունեության իրականացման և մտավոր սեփականության պաշտպանության կարգը և մեթոդները,
- տնտեսագիտության հիմունքներին,
- միջնակարգ, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտական և մանկավարժական գործունեության կազմակերպման մեթոդները:

1.4 Շրջանավարտի կրթությունը շարունակելու հնարավորությունը.

Բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած _____ մագիստրոսը պատրաստ է կրթությունը շարունակելու

- երկրորդ մասնագիտությամբ բակալավրի կամ մագիստրոսի որակավորում ստանալու համար,

➤ ասպիրանտուրայում՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու նպատակով:

1.5 Մագիստրոսական ծրագրերի համառոտագրությունների ցանկը:

Տրվում են տվյալ մասնագիտական ուղղության մեջ ընդգրկված բոլոր մասնագիտական ծրագրերի (մասնագիտացումների) համառոտագրերը, յուրաքանչյուրը 10-25 տող ծավալով, որը ներկայացնում է մագիստրոսի մասնագիտական գործունեության որոշակի նեղ բնագավառը, գործունեության տեսակները, նշվում են մասնագիտացումների պետական դասիչները:

Մագիստրոսական ծրագրի գիտահետազոտական բաղադրիչը որոշվում է մագիստրոսական մասնագիտացման ծրագրերով՝ բուհի գիտխորհրդի որոշմամբ:

2. Մագիստրոսի պատրաստության մակարդակին և մասնագիտացման պատրաստման ծրագրերի յուրացմանը ներկայացվող պահանջները և մրցութային ընտրության պայմանները:

2.1 Մագիստրոսի մաստագիտացված պատրաստման ծրագիրը յուրացնել ցանկացող անձը պետք է ունենա պետական նմուշի փաստաթղթով հաստատված բարձրագույն մասնագիտական կրթություն:

2.2 _____

(բակալավրական մասնագիտությունների դասիչները և անվանումները)
մասնագիտությունների գծով բակալավրի դիպլոմ ունեցող անձինք մագիստրատուրա են ընդունվում մրցութային կարգով՝ համաձայն ՎՊՄԻ-ի գիտխորհրդի կողմից մագիստրատուրայի ընդունելության կարգի:

2.3 Սույն պետական կրթական չափորոշիչի 2.2 կետում նշված մասնագիտությունների ցանկին չհամապատասխանող, բայց հարակից մասնագիտությունների գծով բակալավրի դիպլոմ ունեցող անձինք կարող են մասնակցել մագիստրատուրայի մրցույթին՝ բակալավրի բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչով նախատեսված այն դասընթաց(ներ)ի քննություն(ներ)ը հանձնելուց հետո, որոնք անհրաժեշտ են մագիստրոսի մասնագիտացված պատրաստման ծրագիրը յուրացնելու համար:

3. _____ մասնագիտությամբ

դասիչ, մասնագիտության անվանում
_____ մագիստրոսի պատրաստման հիմնական անվանում
կրթական ծրագրին ներկայացվող ընդհանուր պահանջները:

3.1 _____ մագիստրոսի պատրաստման
հիմնական կրթական ծրագիրը մշակվում է՝ սույն պետական կրթական չափորոշիչի համաձայն և ներառում է մասնագիտության ուսումնական պլանը, ուսումնական դասընթացների, պրակտիկաների և գիտահետազոտական աշխատանքների ծրագրերը:

3.2 _____ մագիստրոսի պատրաստման հիմնական
կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի իրականացման պայմաններում և ուսումնասիրության ժամկետներին ներկայացվող պահանջները կանոնակարգվում են սույն պետական կրթական չափորոշիչով:

3.3 _____ մագիստրոսի պատրաստման կրթական
ծրագիրը ներառում է բակալավրի հիմնական կրթական և մագիստրոսի մասնագիտացված պատրաստման ծրագրերը: Մագիստրոսի մասնագիտացված

պատրաստման կրթական ծրագիրը ձևավորվում է հանրապետական, բուհական, մագիստրանտի կողմից ընտրովի դասընթացներից և գիտահետազոտական աշխատանքից:

Մագիստրանտի կողմից ընտրովի դասընթացները յուրաքանչյուր կրթաբլոկում իրենց բովանդակությամբ պետք է լրացնեն հանրապետական բաղադրիչում նշված դասընթացները:

3.4 _____մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը պետք է ունենա

հետևյալ կառուցվածքը.

I Ընդհանուր մասնագիտական առարկաներ (ԸՄԱ),

II Ծրագրի պարտադիր դասընթացներ (ՊԴ)

ա) Մասնագիտական դասընթացներ (ՄԴ)

բ) Կրթական հաստատությունների կառավարում (ԿՀԿ)

III Ընդհանուր մանկավարժական առարկաներ (ԸՄԱ)

IV Մանկավարժական պրակտիկա (ՄՊ)

V Պետական քննություններ (ՊՔ)

VI Գիտահետազոտական աշխատանք (ԳԱ)

3.5 _____մագիստրոսի պատրաստման ծրագրի բուհական բաղադրիչի բովանդակությունը պետք է ապահովի շրջանավարտի պատրաստությունը՝ համաձայն սույն պետական կրթական չափորոշիչով սահմանված որակավորման բնութագրի:

4. _____

դասիչ, մասնագիտության անվանում

մասնագիտությամբ _____մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնին ներկայացվող պահանջները.

Դասիչ	Դասընթացների անվանումը և նրանց հիմնական բաժինները	Ժամերը
1	2	3
ԸՄԱ	Ընդհանուր մասնագիտական առարկաների կրթաբլոկ	
ԸՄԱ.Ն.00	Հանրապետական բաղադրիչ	
ԸՄԱ.Ն.01	Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում	
ԸՄԱ.Ն.02	Օտար լեզու մասնագիտական հաղորդակցության ոլորտում	
ԸՄԱ.Բ.00	Բուհական բաղադրիչ	
ԸՄԱ.Բ.01		
ԸՄԱ.Բ.02		
ԸՄԱ.Ը.00	Ընտրովի դասընթացներ	
ԸՄԱ.Ը.01		
ԸՄԱ.Ը.02		
ՊԴ.00	Ծրագրի պարտադիր դասընթացներ	
ա)ԿՀԿ .00	Կրթական հաստատությունների կառավարում	

ԿՀԿ.Հ.00	Հանրապետական բաղադրիչ	
ԿՀԿ.Հ.01		
ԿՀԿ.Հ.02		
ԿՀԿ.Բ.00	Բուհական բաղադրիչ	
ԿՀԿ.Բ.01		
ԿՀԿ.Բ.02		
ԸՄԴ.00	Ընդհանուր մանկավարժական դասընթացներ	
ԸՄԴ.Հ.00	Հանրապետական բաղադրիչ	
1	2	3
ԸՄԴ.Հ.01		
ԸՄԴ.Հ.02		
ԸՄԴ.Բ.00	Բուհական բաղադրիչ	
ԸՄԴ.Բ.01		
ԸՄԴ.Բ.02		
ԸՄԴ.Ը.00	Ընտրովի առարկաներ	
ԸՄԴ.Ը.01		
ԸՄԴ.Ը.02		
ՄՊ. 00	Մանկավարժական պրակտիկա	
ՊՔ 00	Պետական քննություն Ուսումնական հատված, ընդամենը	
ԳՀ. 00	Գիտահետազոտական աշխատանք	
ԳՀ.01	Կուրսային աշխատանք	
ԳՀ.02	Ռեֆերատ, զեկուցում	
ԳՀ.03	Գիտահետազոտական աշխատանք՝ մագիստրոսական ատենախոսության թեմայով	
ԳՀ.04	Գիտահետազոտական պրակտիկա	
ԳՀ.05	Մագիստրոսական թեզի ձևակերպում և պաշտպանություն Գիտահետազոտական հատված, ընդամենը	
	Մագիստրոսի մասնագիտացված պատրաստման ընդհանուր ժամաքանակը	

5. _____

դասիչ, մասնագիտության անվանում
մասնագիտությամբ _____ մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագրի յուրացման ժամկետները:

5.1 _____ մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագրի յուրացման ժամկետը առկա (ցերեկային) ուսուցման ձևով 104 շաբաթ է, որից.

- տեսական ուսուցումը, ներառյալ մագիստրանտի հետազոտական աշխատանքը՝ 58 շաբաթ,

- քննաշրջանները՝ 10 շաբաթ,
- պրակտիկաները.
 - ա) մանկավարժական պրակտիկան՝ 4 շաբաթ
 - բ) գիտահետազոտական պրակտիկա՝ 2 շաբաթ
- եզրափակիչ պետական որակավորումը, ներառյալ ավարտական որակավորման (մագիստրոսական ատենախոսության) աշխատանքի պատրաստումը և պաշտպանությունը՝ 10 շաբաթ,
- արձակուրդները (ներառյալ հետբուհական 8-շաբաթյա արձակուրդը)՝ 20 շաբաթ:

5.2 Ավարտական որակավորման աշխատանքի կատարման ժամանակացույցը, ընթացիկ վերահսկման և ատեստավորման ձևը, պաշտպանության թույլատրման կարգը սահմանվում է՝ ՎՊՄԻ-ի գիտական խորհրդի կողմից հաստատված կարգին համաձայն:

5.3 Մագիստրանտի ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն ծավալը սահմանվում է շաբաթական 45 ժամ՝ ներառյալ լսարանային և արտալսարանային (ինքնուրույն) աշխատանքները:

5.4 Առկա ուսուցման ձևով սովորող մագիստրանտի լսարանային պարապմունքների ծավալը չպետք է գերազանցի շաբաթական 20 ժամը: Նշված ծավալը չի ընդգրկում ֆակուլտատիվ դասընթացների դասաժամերը:

5.5 Ուսումնական տարվա տեսական ուսուցման տևողությունը 34 շաբաթ է:

5.6 Ուսումնական տարվա արձակուրդները պետք է լինեն 8-10 շաբաթ, այդ թվում 2 շաբաթից ոչ պակաս՝ ձմեռային քննաշրջանից հետո:

6. _____ մասնագիտությամբ

դասիչ, մասնագիտության անվանում

_____ մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագրի մշակման և իրականացման պայմաններին ներկայացվող պահանջները:

6.1 _____ մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագրի մշակմանը ներկայացվող պահանջները.

6.1.1 Մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագրի աշխատատարությունը պետք է համապատասխանի 120 կրեդիտային միավորի (30 կրեդիտային միավոր՝ յուրաքանչյուր կիսամյակի համար):

6.1.2 Ուսումնական բաղադրիչների տեսակները (դասախոսություն, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներ, գիտահետազոտական աշխատանք, պրակտիկաներ, ավարտական և կուրսային աշխատանքներ) և ծավալները դասընթացներին հասկացված դասաժամերի շրջանակում, սահմանում է բուհը:

6.1.3 Ուսանողի գիտելիքների ստուգումը և գնահատումը կատարվում է՝ ըստ ՎՊՄԻ –ում մշակված և գիտխորհրդի կողմից հաստատված կանոնակարգի:

Դասընթացից եզրափակիչ գնահատականը նշանակվում է “գերազանց”, “լավ”, “բավարար”, “անբավարար”, “ստուգված” կամ “չստուգված”:

Մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված բոլոր ուսումնական դասընթացների, պրակտիկաների, պետական քննությունների, կուրսային և գիտահետազոտական աշխատանքների համար պարտադիր է եզրափակիչ գնահատականի նշանակումը:

6.1.4 Մագիստրատուրայի ուսումնական պլանով նախատեսված կուրսային աշխատանքների քանակը չպետք է գերազանցի 2-ը:

6.1.5 _____ մագիստրոսի մասնագիտացված պատրաստման ծրագրի գիտահետազոտական մասը պետք է պարունակի խնդիրների ցանկ, որոնք գիտագործնական և կիրառական նշանակություն ունեն մագիստրոսի գործունեության ոլորտների համար և ներկայացվում են որպես մասնագիտական ծրագրի կուրսային (1-ին տարվա ուսուցում) և ատենախոսական (2-րդ տարվա ուսուցում) աշխատանքների թեմատիկ ցանկ:

6.1.6 _____ մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու դեպքում հնարավոր է՝

- առանձին դասընթացների դասավանդումն իրականացնել հեղինակային դասախոսությունների, գործնական պարապմունքների, առաջադրանքների և գիտական սեմինարների ձևով՝ ՎՊՄԻ-ի մշակած ծրագրերով՝ հաշվի առնելով բուհի գիտական դպրոցների մասնագիտական առանձնահատկությունները, դասախոսների հետազոտական ուղղվածությունն ու հակումները, որոնք կապահովեն առանձին դասընթացների թեմատիկայի լուսաբանում՝ ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը համապատասխան,
- հնարավորություն ընձեռել մագիստրանտներին շաբաթական 2-4 ժամով անցկացնելու ֆիզիկական կուլտուրայի պարապմունքներ,

6.1.7 Ուսուցումը մագիստրատուրայում իրականացվում է մագիստրանտի աշխատանքի անհատական ծրագրով, որը մշակվում է մագիստրանտի գիտական ղեկավարի և բուհի (ֆակուլտետի) մագիստրոսական ծրագրի գիտական ղեկավարի (ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի) մասնակցությամբ: Մագիստրանտի աշխատանքի անհատական ծրագիրը հաստատում է ֆակուլտետի ղեկանը:

6.2 Ուսումնական գործընթացի կադրային ապահովման պահանջները:

_____ մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովվի համապատասխան գիտամանկավարժական կադրերով՝ դասավանդման ուղղվածությանը համապատասխանող բազային կրթությամբ, որոնք հետևողականորեն զբաղվում են գիտամեթոդական և գիտահետազոտական գործունեությամբ:

Մագիստրատուրայում դասավանդող դասախոսները պետք է ունենան գիտական աստիճան (գիտական կոչում, արվեստի ոլորտի պատվավոր կոչում և այլն):

Մագիստրանտի գիտական ղեկավարը պետք է ունենա գիտական աստիճան (գիտական կոչում) և կարող է իրականացնել մինչև 4 մագիստրանտների ղեկավարություն: Մագիստրոսական ծրագրի գիտական և մանկավարժական բաղադրիչների ընդհանուր ղեկավարը գիտությունների դոկտոր կամ պրոֆեսոր է, որը կարող է ղեկավարել մինչև 2 մագիստրոսական ծրագիր:

ՎՊՄԻ-ի գիտխորհրդի որոշմամբ մագիստրոսական ծրագրերի գիտական ղեկավարներ կարող են նշանակվել գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող դոցենտներ:

Մագիստրոսական ծրագրի գիտական ղեկավարը պետք է ունենա վերջին 5 տարիների ընթացքում թեկնածուական ատենախոսություն պաշտպանած ասպիրանտ(ներ):

Մագիստրանտների գիտական ղեկավարները պետք է վարեն գիտական հետազոտություններ մագիստրոսական ծրագրի թեմատիկայով, հրապարակեն գիտական հոդվածներ, էլույթներով հանդես գան գիտաժողովներում: Գիտական

ղեկավարների գիտամանկավարժական գործունեությունը հիմնականում իրականացվում է մագիստրոսական ծրագրերի հիմնական և հատուկ դասընթացների վարմամբ և այդ դասընթացների գիտամեթոդական ապահովմամբ:

6.3 Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական ապահովման պահանջները.

_____ մագիստրանտի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը պետք է ներառի մագիստրանտի կողմից դասընթացների լաբորատոր, գործնական (սեմինար) աշխատանքների կատարում՝ համաձայն հաստատված ցանկի, ինչպես նաև գործնական առաջադրանքների և գիտահետազոտական աշխատանքների կատարում՝ համակարգչային կիրառական ծրագրային փաթեթների օգտագործմամբ:

Մագիստրանտը պետք է կարողանա նաև ստեղծել իր մասնագիտացման ուղղությամբ անհրաժեշտ տեղեկատվական *բանկ*՝ տարբեր տեղեկատվական աղբյուրների և ինտերնետի օգտագործմամբ:

ՎՊՄԻ-ի գրադարանը պետք է ունենա համապատասխան ֆոնդեր և տվյալների բազա՝ _____ մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման համար:

ՎՊՄԻ-ի գրադարանային ֆոնդերը և տվյալների *բանկերը* պետք է մատչելի լինեն յուրաքանչյուր մագիստրանտի համար: Դրանք պետք է ապահովված լինեն դասընթացների բաղադրիչներին (դասախոսություններ, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներ, կուրսային, գիտահետազոտական և ավարտական աշխատանքների խորհրդատվություն, պրակտիկաների ծրագրեր) նվիրված մեթոդական ձեռնարկներով և ցուցումներով, ինչպես նաև տեսալսողական միջոցներով ու ձեռնարկներով:

Բուհի գրադարանը պետք է հագեցած լինի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների արդի ուսումնամեթոդական նյութերով, մասնագիտական պարբերականներով, ռեֆերատիվ հանդեսներով, գիտական, տեղեկատու գրականությամբ և այլն:

6.4 Ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման պահանջները:

ՎՊՄԻ-ն պետք է ունենա համապատասխան նյութատեխնիկական բազա՝ _____ մագիստրոսական ծրագրով ուսումը կազմակերպելու համար: Այն պետք է համապատասխանի գործող սանիտարահիգիենիկ նորմերին և հակահրդեհային կանոններին, ապահովի ուսումնական պլանով նախատեսված բոլոր պարապմունքների և հետազոտական աշխատանքների կատարումը:

6.5 Պրակտիկաների կազմակերպման պահանջները.

ՎՊՄԻ-ի մագիստրոսական ծրագրերով նախատեսված են մանկավարժական (գիտամանկավարժական) և գիտահետազոտական պրակտիկաներ:

6.5.1 Մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկաները կարող են իրականացվել տարբեր տիպի կրթական և գիտահետազոտական հիմնարկություններում՝ ըստ ՎՊՄԻ-ի համապատասխան ամբիոնում մշակված պրակտիկայի ծրագրի:

6.5.2 Գիտահետազոտական պրակտիկան անցկացվում է մագիստրանտի գիտահետազոտական աշխատանքի (ատենախոսության) բնագավառի հետազոտություններով զբաղվող գիտահետազոտական կազմակերպություններում, այլ բուհերի համապատասխան ամբիոններում և հետազոտական լաբորատորիաներում:

7. _____ մասնագիտությամբ

դասիչ, մասնագիտության անվանում

մագիստրոսի պատրաստման մակարդակին ներկայացվող պահանջները:

7.1 Մագիստրոսի մասնագիտական պատրաստվածությանը ներկայացվող պահանջները.

7.1.1 _____ մագիստրոսի մասնագիտական պատրաստության ընդհանուր պահանջները որոշվում են՝ համապատասխան մասնագիտության բակալավրի պատրաստությանը ներկայացվող պահանջներով՝ ըստ բակալավրի բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշիչի, ինչպես նաև մագիստրոսի մասնագիտական պատրաստմանը ներկայացվող պահանջներով:

7.1.2 _____ մագիստրոսը պետք է կարողանա լուծել սույն պետական կրթական չափորոշիչի 1.3.3 կետում նշված պահանջներից բխող խնդիրները՝ (նշվում են մասնագիտացմանն առնչվող 6-8 հիմնական խնդիրներ):

7.1.3 _____ մագիստրոսը պետք է տիրապետի՝

անվանում

- ինքնուրույն գիտահետազոտական և գիտամանկավարժական գործունեություն վարելու փորձառությանը,
- գիտափորձի ծրագրավորման, կազմակերպման և իրականացման մեթոդներին,
- համակարգչային եղանակով խմբագրման, տեղեկատվության հավաքման, մշակման, պահպանման, փոխանցման և պաշտպանության մեթոդներին,
- գիտության և մասնագիտական կրթության բնագավառների տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներին,
- հետազոտության արդյունքների մշակմանը և հրատարակմանը գիտական մամուլում,
- գիտական ակնարկների, հաշվետվությունների և էլույթների ձևակերպման մեթոդներին,
- մասնագիտական կրթության կազմակերպական ձևերին և մեթոդներին:

7.1.3 _____ մագիստրոսը պետք է ունակ լինի՝

անվանում

- ձևակերպելու և լուծելու գիտահետազոտական և գիտամանկավարժական գործունեությունյան մեջ ծագած խորը մասնագիտական գիտելիքներ պահանջող հիմնախնդիրներ,
- ընտրելու և կատարելագործելու մեթոդներ՝ հետազոտության ընթացքում ծագած խնդիրների լուծման նպատակով,
- արդյունավետ օգտագործելու տվյալների *բանկերը* և ծրագրային փաթեթները,
- վերլուծելու, ըմբռնելու և իմաստավորելու ստացված արդյունքները,
- ձևակերպելու գիտական ակնարկներ, ռեֆերատներ, էլույթներ, թեզեր, հաշվետվություններ և գիտական հոդվածներ

7.1.4 ՎՊՄԻ-ն մշակում և սահմանում է մագիստրոսի մասնագիտացված պատրաստման գիտահետազոտական հատվածի պահանջները՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության (ՀՀ ԿԳՆ), ինչպես նաև աշխատաշուկայի ներկայացված պահանջները:

7.2 _____ մագիստրոսի եզրափակիչ պետական որակավորման պահանջները.

7.2.1 Ընդհանուր պահանջներ

մասնագիտությամբ

դասիչ, մասնագիտության անվանում

_____ մագիստրոսի եզրափակիչ պետական որակավորումը ներառում է ավարտական որակավորման (մագիստրոսական ատենախոսության) պաշտպանությունը և պետական քննության հանձնումը, որոնք թույլ են տալիս բացահայտելու մագիստրոսի տեսական և գործնական պատրաստությունը սույն պետական կրթական չափորոշիչով սահմանված մասնագիտական խնդիրների լուծման բնագավառում:

Եզրափակիչ պետական որակավորման բաղադրիչները պետք է լրիվ համապատասխանեն մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագրին:

Պետական որակավորման հիմնական պարտադիր մասը մագիստրոսական ատենախոսության պաշտպանությունն է:

Պետական որակավորման իրականացման կարգը ընդունում է ՎՊՄԻ-ի գիտխորհուրդը՝ համաձայն ՀՀ ԿԳՆ պետական կրթական չափորոշիչներ մշակող գիտամեթոդական հանձնաժողովի կողմից ներկայացված համապատասխան կարգի:

7.2.2 _____ մագիստրոսի ավարտական որակավորման աշխատանքը (մագիստրոսական ատենախոսությունը) ավարտուն տեսական կամ փորձարարական աշխատանք է՝ կապված գիտության և տեխնիկայի տվյալ բնագավառին առնչվող արդի և հրատապ խնդիրների լուծմանը՝ համաձայն մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագրի պահանջներին:

Բովանդակային առումով մագիստրոսական ատենախոսությունը պետք է՝

- ներկայացվի որպես բնագավառի հիմնահարցերից մեկին վերաբերող հետազոտություն, որում մագիստրանտը բացահայտում է իր տեսական գիտելիքները և գործնական ունակությունները՝ մասնագիտական խնդիրների լուծման համար,
- ցույց տա մագիստրանտի կողմից գիտական և համակարգային վերլուծության մեթոդների յուրացման աստիճանը, տեսական ընդհանրացումներ և գործնական եզրակացություններ կատարելու ունակությունը,
- կրի ստեղծագործական բնույթ՝ հավաստի տվյալների օգտագործմամբ,
- բացահայտի մագիստրանտի պատրաստության աստիճանը ինքնուրույն աշխատելու _____ ոլորտներում,

նշել գործունեության ոլորտները

- համապատասխանի նյութի տրամաբանված և հստակ շարադրման պահանջներին և հենվի հավաստի փաստերի վրա,
- արտացոլի մագիստրանտի ունակությունը՝ օգտագործելու տեղեկատվության որոնման, ընտրության, համակարգման և մշակման արդի մեթոդները, աշխատելու բնագավառի նորմատիվային-իրավական ակտերի հետ,
- ձևավորված լինի հրատարակչական արդի նորմատիվներին և պահանջներին համապատասխան, ունենա հետազոտական աշխատանքի հաշվետվությանը բնորոշ կառուցվածք և 40-50 էջ համակարգչային շարվածքի ծավալ:

Ավարտական որակավորման (մագիստրոսական ատենախոսության) աշխատանքների թեմատիկայի ընտրությունը, հաստատումը, մագիստրանտների գիտական ղեկավարների նշանակումն իրականացվում է՝ ըստ սույն չափորոշիչի հիման վրա մշակված և ընդունված ՎՊՄԻ-ի մագիստրատուրայի մասին կանոնակարգի:

7.2.3 Պետական քննություններին ներկայացվող պահանջները: Պետական քննությունների ցանկը սահմանում է ՀՀ ԿԳՆ պետական կրթական չափորոշիչներ մշակող գիտամեթոդական հանձնաժողովը: ՎՊՄԻ-ն իրավասու է լրացնել այդ ցանկը այլ քննություններով: Պետական քննության բովանդակությունը, անցկացման կարգը և մագիստրանտների գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է ՎՊՄԻ-ի գիտական խորհուրդը՝ համաձայն ՀՀ ԿԳՆ համապատասխան հանձնաժողովի մեթոդական ցուցումների, սույն կրթական չափորոշիչի հավելվածում ներկայացված օրինակելի ուսումնական պլանի, պետական քննությունների անցկացման կարգի: